դրան պաշտպանության պարտականությունը։ Արաբացիք բավական նշանավոր տեղ գրավեցին ոստիկանանիստ Դվին քաղաքի բնակչության մեջ։ Բայց Պարտավի և Դվինի բնակչության միջև հաղորդակցությունը պահպանվում էր հնուց բանուկ ճանապարհով, որը Դվինից Սևանա լճի հարավային կողմերով՝ Սոթքի (Զոդի) լեռնանցքով փոխադրվում էր Թարթառ և Խաչեն գետերի հովիտները և հասնում Պարտավ՝ թողնելով մի կողմ Զանգեզուր-Ալանդյազ լեռնաշղթայից դեպի արևելք ձգվող գավառները, այժմյան Զանգեզուրն ու Մեղրին։ Այդ պատմական ժամանակաշրջանում Սիսականը չէր ներգրավված այն ժողովրդական տեղաշարժի պրոցեսի մեջ, որը տեղի էր ունենում Հայկական լեռնաշխարհի կենտրոնական և հարավային շրջաններում հայ տարրի հետզհետե ավելի դեպի Սև ծովի մերձեզրյա գավառները նահանջելու պրոցեսի մեջ։ Այդ պրոցեսը հնարավորություններ ստեղծեց Բագրատունիների տան համար իրենց դիրքը և հեղինակությունը բարձրացնելու նպատակով հենակետ դարձնելու հենց այդ՝ Սև ծովին ավելի մոտ գտնված շրջանները։ Արաբական տիրապետության վերջին տարիներում, արդեն X դարից, Սիսականի հայ բնակչությունը այնքան ուժեղ է ներկայացված լինում, որ այդտեղի նախարարական տունը հետևելով Բագրատունիների և Արծրունիների օրինակին՝ կարողացավ թագավորական տիտղոս ձեռք բերել։ Այդ թագավորական տունը անշուշտ ոչ միայն օգտվելով իր աշխարհագրական ամուր դիրքից, այլև հենվելով իր ազատասեր բնակչության և թվի վրա՝ իր անկախությունը պահպանեց գրեթե մեկ ու կես հարյուրամյակ ավելի երկար, քան թե Արծրունիներն ու հայ Բագրատունիները։ Սիսականի Բաղաց վերջին թագավորը կարողացավ սելջուկներին դիմադրել Կապան գավառի իր Բաղաբերդ ամրոցում մինչև 1170 թ.[1], այն ամրոցներից մեկում, որոնք պատմագրի ասելով՝ «ի մարդկան հնարից հեռացեալ են, բայց միայն թե Տէր մատնեսցէ»[2]։ Եվ մինչդեռ լեռնաշխարհի այլ մասերից ռազմական տարրը, թագավորական տներն ու նախարարների մի նշանավոր մասը, սելջուկյան հեղեղի առջև տեղի տալով, երկրից հեռացավ՝ ո՛րը դեպի Վրացական կալվածքները, ո՛րը Փոքր Ասիա կամ Կիլիկյան բարձունքները, ոմանք էլ ավելի հեռու, մինչև Բալկանյան թերակղզին և նույնիսկ Մերձկարպատյան ռուսական երկրները, տանելով իրենց հետ դարերի ընթացքում ձեռք բերած ռազմական հմտությունը և հայ գյուղացիության բավականին հոծ բազմությունն։ Սիսականի հայ ժողովուրդը մնաց իր մայրենի երկրում, իր բնական եռանկյունու մեջ պարփակված և նրա իշխանական տներից ոչ մեկը չորոնեց հաջողություն և նոր ապագա իր պապական երկրին դուրս։ Ընդհակառակը՝ երբ Վրաստանում գժտություններ ծագեցին գահաժառանգության խնդրի շուրջը, վրացական Օրբելյան իշխանական տոհմը, խույս տալով այդ վեճերի մեջ հաղթող հանդիսացած հակառակորդ կուսակցության թեկնածուի հալածանքներից, ապահով ապաստան գտավ Սյունիքում և մասնավորապես Սիսական-Զանգեզուրում և ձուլվելով տեղական իշխանական տների հետ՝ սկսեց խաղալ նրանց մեջ ղեկավար և կենտրոնական դեր[3]։

---

[1] Օրբէլեան Ստ., գլ. ԼԱ, էջ 337. Ղ. Ալիշան, *Սիսական*, էջ 295։

[2] Օրբէլեան Ստ., գլ. Գ, էջ 13։

[3] Այս տոհմից է ծագել Ստեփաննոս Օրբէլեանը, որը իր պատմության գլ. ԿԶ մանրամասն պատմում է այս դեպքերի մասին «վասն գալոյ նոցա (Օրբէլեանց) յաշխարհս յայս»։